

տուկներուն մէջ կամ անոնց մօտ : Հեղինակը ամենայն վստահութեամբ կ'ապահովցընէ , որ 'ի գործ գնելով այս բանս՝ կրնանք ստանալ մի և նոյն ելեկտրութեան շրջանէն որ և իցէ թիւ լամպարաց , միայն թէ կարևոր զօրութիւն գործածուի և ծնիչ մեքենայքն ըստ բաւականին ըլլան : Երկայն շրջանի մը ծայրը գտնուած լոյսերը այնպէս շողշողուն պիտի չըլլան ինչպէս ծնանող մեքենային մօտ եղած լոյսերը : Այս բանիս էտիսոն կը համոզուի , սակայն

կ'ըսէ՝ թէ կազի լուսաւորութեան ալ նոյն բանը կը հանդիպի :

Ինչպէս որ կազին կ'ընեն , պէտք է միշտ մարդ մ'ըլլայ ամեն կայարանին մէջ , որուն յանձնուի բանալ և փակել հոսանքին շրջանը , որպէս զի ամբողջ լապտերները հաւասար ըյս տան : Մի և նոյն շրջանի մը զանազան կէտերուն վրայ եղած լապտերներուն լուսոյն միջի տարբերութիւնն ոչինչ պիտի ըլլայ » :

ԶԲԱՆՑՔ ԸՆԴ ՄԷՋ ՈՎԿԻԱՆՈՍԻ ԵՒ ՄԻՋԵՐԿՐԱԿԱՆՏԻ

Երկար ժամանակէ 'ի վեր Գաղղիոյ մէջ կը խօսուի ջրանցքի մը բացման վրայ՝ զՈվկիանոս ընդ Միջերկրականի միացընելու նպատակաւ : Այսպիսի մտածութիւն մը վերջին ժամանակներս աւելի հաստատուն կերպարանք մ'առաւ , և քիչ ժամանակէն երեսփոխանական ժողովոյն հաւանութեանը պիտի ներկայացուի : Այս տեղ յառաջ բերենք քանի մը մասնական տեղեկութիւններ , որոնք այս նիւթիս կը վերաբերին :

Ծովային նոր ճամբան Պորտոյէն պիտի սկսի — որ Գաղղիոյ երրորդ նաւահանգիստն է՝ վաճառականական շարժման նկատմամբ — և պիտի երթայ հասնի 406 քիլոմետր հեռու Նարպոնա , յի հին նաւահանգստին : Ծովային ջրանցքը պիտի կտրէ Ժիրոնտի , Լոգի և Կառոնի , Դառնի և Կառոնի , Ժերի և Վերին Կառոնի նաւահանգիստները , և պիտի վերջանայ Լիոնի նեղուցին սահմանակից դաւառաց մէջ , այսինքն է Արիէժի , Օտի , Կարտի և Հերոլդի նահանգաց մօտ : Այս ջրանցքին չինութեաւ նը համար պէտք է 550 միլիոն . բայց դեռ քանի որ գործոյն իրական ծրագիրը ելած չէ , այս գումարս պէտք է

համարինը իբրև ընդհանուր հաշիւ մը , և ոչ ճիշդ : Սակայն կը կարծուի որ զգալի կերպով շատ աւելի ծախք պիտի չերթայ , ապացոյց ունենալով նմանօրինակ գործոց հաշիւները , որոնց վրայ Պ. Լըբրինէյ , առաջարկութեանս հեղինակը , խոր հմտութիւն ունի : Արհեստական տեսութեամբ նկատելով թուի թէ անյայտելի գծաւարկութիւնը պիտի չհանդիպին : Իսկ գալով գործոյն օգտակարութեան , պէտք է բանիք՝ որ այս նոր ջրանցքս մեծապէս կը համահռոտէ նաւուց ճամբան , Հիմայ , յԱտլանտեան Ովկիանոսէ Միջերկրական գալու համար՝ պէտք է Ս. Վիլենցիոսի հրուանդանէն շրջան ընելով ձիպիլդերայի նեղուցն անցնիլ : Պորտոյէն դէպ 'ի Նարպոնա ուղիղ զիծն՝ կ'ազատէ այս երկայն շրջանէս , և Միջերկրականի նաւահանգիստներէն դէպ յԱտլանտեան Ովկիանոս անցնելուն մէջ 1300 , 1500 նաւ 1900 քիլոմետր ճամբու շահ կ'ըլլայ , եթէ հասնելու կէտը զգուշացնող համարինը , իսկ Պորտոյի և Մարսիլիոյ մէջ եղած ճամբուն շահն է 2172 քիլոմետր :